Հուսիկ Արա

Անընտրանք

Իմ սերն ես վերջին անգամ՝
առանց խուճապ ու համբերատար.
քեզ սիրում եմ ամբողջական, անհատակ՝
կանխիկ սրտով,
նեղ օրերիս պահուստ ու խնայողությամբ,
և էլի մի կյանք՝ ապառիկ:

Ինձ մատնում եմ քո հմայքին՝
բուռն, ինքնակեզ, անմնացորդ,
ու պահերին խաղ ու վաղանց՝
մինչև իսկ մանրը, չնչին մի թել ինձ պահելու:
Ձեռնբաց, ինձ շաղ եմ տալիս ինքնամոռաց,
անկետ, անգիծ, ազատարած.
մի՛շտ եմ ու անընդհատ քո քմայքին՝
թեկուզ միվայրկյան, նեղլիկ ու ինքնաբավ:
Ինչ որ իմն էր՝վստահել եմ քո խնամքին.
իմ բացարձակն ես, և ես չունեմ այլընտրանք,
փոթորկվում եմ միակ անգամ ու բովանդակ:

Այդպես կարապն է երգում լիաձայն՝
ընդմիշտ լռելու պայմանով
հանուն այդ մեկ երգի: